

Տարեկան գինը 10 բուլբլ, կէս տարվանը 6 բուլբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

0 ԹԱՐԱՔԱԴԱՔԱԳԻՔ ՀԻՄՈՒՄ ԵՆ ՈւՂԴԱԿԻ
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն) :

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական զերջին անցքերը, — Ն. Է. Բ. լին տե ն ու թ լ ի ն : Նամակ Մոսկվայից, Նամակ իդրիցից, Ներքին լուրերը, — Ա. ր տ ա ճ լ ի ն տ ե ն ու թ լ ի ն , Թիւրքիայ, Սերբիա, Նամակ Թիւրքիայից, Արտաքին լուրերը, — Աշխիկը՝ հեռագիրներ, — Յայտարարութիւններ, — Տեղեկացոյց, — Բանաստիճակն : Ս. պատարարը հօր աստե նախօրոյթիւր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Գեռ 1875 թուականին ամբողջ Եւրոպայում լուր տարածվեցաւ, որ Գերմանիան մտադիր է Ֆրանսիային նոր պատերազմ յայտնել, որ կարողանայ արգելել նրա զինուորական նոր կազմակերպութեանը և կարելութեան չափ նրան թուլացնել: Եւրոպական զինուորական էին: Նշմարիտ Գերմանիայում կար զինուորական մի որոշ շնչան, որ ցանկանում էր Ֆրանսիային պատերազմ յայտնել: Եւրոպայի դիտաւորութիւնը յայտնի եղաւ մեծ պետութիւններին, նոցանից մի քանիսը ընդդիմացան, մանաւանդ ռուսաց կանցլեր իշխան Գորչակով, որին ինչպէս ասում են, աջով վեցաւ խաղաղութիւնը պահպանել: Եւրոպայի պատճառը որ Ֆրանսիայում համակրում էին ռուս պետական մարդուն:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն և վերջ)

Տեղումիեանց աւագափողովոր գումարուած և արդէն մէկ քանի նիստ ըրած էր ի Պէրլին. աւերն կողմանէ ամեն տէրութիւնէ յուսադրութիւնք պատօնական խոստումներ թէ ինչ որ միւլըրիստոնեայ ժողովրդաց պիտի տրուի, պիտի տրուի նաև չնայոյ, ձայն չունենի չայեր և ինչ կրնար ունենալ Աւագափողովի մէջ. այլ—իշխն աստ ստիճան էին մեզի տրուած յոյսերը — մեծ և ազնուախօհ ազգի մը, Գաղղլոյ արտաքին գործոց պաշտօնեայն և առաջին լիազօրեապանը յանձն առած էր որ ինք ներկայացուիչ ու փաստաբան կանգնի մեր դատին՝ Աւագափողովին մէջ. նա որ և կատարեալ ազնուութեամբ ընդունած էր մեր խնդրոյն ձեւը, հոգին և գործնական եղանակը՝ ինչպէս որ առաջարկած էինք մեր պաշտօնական գրութիւններով. ինքը պէտք աւագափողոյն այն աւագացի և ճարտարագոյնն ի քաղաքագիտաց նախագահն իսկ աւագափողովին, որ և մասնաւոր ուշադրութեամբ ընտան էր մեր խնդրին ու մեր գրեւոր ամենայն և մասնաւոր հոգախնամութիւն յայտնած առաջնորդն մեր դատին համար, պաշտօնական կերպով

Վերջին ժամանակները «Times»

լըսագրի մէջ տպովեցաւ այդ լըսագրի պիտոութեանը, որտեղ պատմւում էր թղթակցի խօսակցութիւնը իշխան Բիսմարկի հետ 1875 թւականի անցքերի և իշխան Գորչակովի մասին: Պ. Բլոքից իր թղթակցութեան մէջ պատմում է, որ իշխան Բիսմարկ ասել է նրան թէ Կերմանիայում լինջին ժամանակներում, գոնեա որքան իրան յայտնի է, ոչ ոք ղիտաւորութիւն չէ ունեցել Քրանսիային պատերազմ յայտնելու բեմին հետեւապէս և իշխան Գորչակովին էլ ոչինչով չէ օգնել այդ պետութեանը: Այդ թղթակցութեան նպատակը եղել է ցոյց տալ Քրանսիական հանրապետութեանը, որ նա Ռուսաստանին ոչինչով պարտական չէ:

Գերմանական պարլամենտի վերջին նիստերից մեկում, իշխան Ռիմարկ օգուտ քաղելով դեպքից հերքել է «Times»-ի թղթ-թակցութիւնը և ասել է, որ թղթակցութեանը «չէ կարելի հաւատ ընծայել»: Արագիրները այդ գործը երկար քննելուց յետոյ այն եզրակացութեան հասան, որ թղթակցութիւնը հր-

պով ներկայացուց և օրակարգն անցուց մեծ ժողովին Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքին նա-
մակը առ նոյն ինքն նախագահն, Հայ պատգա-
մաւորաց խնդրազիրը, Հայաստանի վարչութեան
համար ծրագրեալ կանոնադիրը և Հայաստանի
վրա վիճակագրական տեսութիւն մը:

Այսպէս ահա ներելի էր մեզի յուսալ թէ
խնդիրն ի հիմանց պիտի քննուէր ու հիմնական
պիտի ընդունէր լուծուի Այլ ճիշդ այս միջոցին
հերանս եւառ գաղտնի դաշնադրութիւնը ընդ մէջ
թուրքայի և Անգղիոյ Արտի նկատմամբ:

Տեղաբերականությունը, ինչն էլ պատկանում է քաղաքական տեսություններից մեկին մոտենում էր ըսելով որպես յանցագործ կրնան ըլլալ Հայերը որ չեն խառնտեսել իրենց գաղթը նոր քաղաքականություն չեն հաստատել և ոչ մեկ տեղություն չեն ստացել մեկ նախադասություն և, որտեղ մեկ յայտնել չէ տակալություն թէ երեկայությունն արդեօք կամ թէ հեռատես քաղաքագությունն առելի մեծ դեր խաղացա՞ն: Այլ այդ դաշնագրությունը՝ որ թիվ գործադրում անուրանալի բարիք մըն է Թուրքիայ համար և Հայոց համար ալ, արեւելք չեղաւ որ Ասեղծողին զբաղել Այս-Սոսեֆանունի դաշնագրություն 16-րդ դարումն, բարեխիտել դաշնագրացնէ, ու մէկ տեղություն երաշխագրություն և հսկողություն փոխանակ բոլոր տեղությունն երաշխագրությունն ու հսկողությունն ղնէ, մինչդեռ միւս կողմէն ալ Թուրք-Անգղիական դաշնագրությունը՝ Անգղիայ մասնագրագրությունն ապահովեալ էր Հայոց համար. այլ արեւելք եղաւ որ Հայ ազգին խնդրը, ամբողջ ազգն անապոստան առնուի:

նորած է և անգլիական կառավարութենից թելադրած: Այն քին հասկանալի է թէ ինչ շարժառիթներ ունի Անգլիական փոքրացնել Փրանսիական ժողովուրդի համակրութիւնը դէպի Ռուսաստան:

Արևելքում խաղաղութիւնը դեռ
ևս հաստատուած չէ: Ապստամ-
բութիւնը ամեն տեղ տարածվում
է: Բօսնիայի ապստամբութենից
յետոյ առաջ է զալիս արնաու-
ների ապստամբութիւնը: Բօս-
նիացիք կռուում են Աստորիայի
հետ, որ իրանց երկիրը չը միա-
նայ այդ պիտութեան հետ, ար-
նաուտները կամենում են ընդգի-
մանալ Սերբիային որոշել նոր
սահմանները:

Քանի որ գործը այս դրու-
թեան մէջ է, մի նոր խնդիր էլ
բարձրանում է Ասիայում: Այդ
խնդիրը Աֆգանիստանի խըն-
դիրն է, որի մանրամասների հետ
ընթերցողը ծանօթ է «Մշակի»
անցեալ համարների արտաքին
բաժնում տպւած յօդուածներին:
Այդ տեղեկութիւնների վրա եթէ
աւելացնենք վերջին հեռագիրները,
որոնք հաղորդում են, որ Անգ-
լիան պատրաստւում է Կոբուլի
էմիրին պատերազմ յայտնել, կը

Որ և է անկողմնակալ մտածութեան համար ակնբերել է որ եթէ թուրք—Անգղիական դաշինք—դրութիւնն Ասիայ քրիստոնէայ ժողովրդոց համար բարեկարգութեան ծրարիրն Անգղիոյ ու թուրքիոյ կառավարութեանց համաձայնութեամբ որոշուի տրամադրած իւլլար, տէրութիւնք իրենց գաղա ծրագրերը արտի որոշէին:

Աւասիկ Պէրլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածը:

«Բ. Ղուլը կը խոտախայ, առանց այլ ևս յապաղելու գործադրել այն բարուղումներն ու բարենորոգումները, զորս տեղական պէտքերին կը պահանջին Հայոց բնակած գաւառներուն մէջ և անոնց ապահովութիւնն երաշխաւորել Չերքեզաց և Գրդաց դէմ: Այս նպատակաւ ձեռք տուած միջոցները պարբերաբար պիտի ծանուցանեն տեղութեանց, որք անոնց գործադրութեանը պիտի սկսեն»:

Տեսարեք երեսփոխանք, եթէ այս յօդուածը ցաւալի բան մ' ունի, այն է որ մեր խնդրոյն լուծումն ըստ մասին կը յետաձգէ. չը կործանէ ազգին յոյսը, այլ և չը պահէր նոյնհետայնի ինչ որ ազգ կրցած է յանկարծակի կիրպով իր բաղձնանցին կ'ատար հասնիլ. զգեցողութիւնն ի միայն և մահ, որ յանկարծակի կրնայ զայ անձմը և ազգի մը վրա. կեանքն ու բարեկեցութիւնը համր կը ձևանան. իւր ասոր համար է որ կանխարարն անոնք որ կսեն թէ՛ Բիշնէ սկսանք եթէ պիտի չը յաջողէինք». զի օր մը յաջողեալ համար՝ այս օրէն սկսեալ էր և զի եթէ ապա հով կերպով գիտայի ալ առաջոց ինչ պիտի չը յաջողուի բնաւ, դարձեալ պիտի սկսէիք. և այլ

տեսնենք, որ գործը բաւական դժուարանում է:

Գերմանական պարլամենտը ընկնեց սօցիալիստների դեմ ուղղած օրէնքի նախագիծը և արդէն յանձնեց բսան և մէկ անգամնեից կազմած մասնաժողովին. Պարլամենտի մէջ մեծ վիճաբանութիւններ կային այդ օրէնքի վերաբերութեամբ: Կան այնպիսի կուսակցութիւններ, որոնք կամենում են օրէնքը ընդունել մի քանի փոփոխութեամբ: Սօցիալիստները աշխատում են, որ նա բոլորովին մերժվի: Պարլամենտի նախագահը անկողմնապահ կերպով չէ կատարում իր պարտաւորութիւնը և աւելի խիստ է՝ դէպի սօցիալիստները:

4. S.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

6 սեպտեմբերի

Հնամարտուն ասած ես երբեք չէի գրի մի այսպիսի աննշան բանի վրա, բայց ինչ արած չառ կան այնպիսի երևոթյուններ, որոնց վրա կարծում ես թէ չարժէ ուշադրութիւն դարձնել, բայց յայտնվում է. քնհակառակը, որ ոչ թէ միայն արժէ, այլ մինչև անգամ հարկաւոր է: Երեք ամիս հայ ժամերգութիւն չը լսելուց յետոյ ի հարկի է չառ զաղդը էր ինձ համար այս իրաւակի եկեղեցի դնալ. բայց ոչ բարով լինէր դնալս՝ «Թէ՛ս առաջուց իմանայի, կամ չէի դնայ

որով գրէր ինձի ազգս ի դատապարտութիւնս
Բայց ոչ ինքնին ձեռնարկեցի եւ յայս գործ,
այլ յառաջ քան զիս և բուռն քան զիմս էր ազ-
գին ընդհատուր փափազը, և ես պատգամ միայն
ընդունուած էի զայն փափազն յառաջ վարելու:
Արդ՝ երկու կարգ առարկութիւնք կան, որոն
աղբանք ցաւը կաւեւանայ յիս իմ ցաւերուս վրա:
այս առարկութեանց մին է այն՝ թէ վասն զի
քիչ խնդրեցինք, քիչ ընդունեցանք. թէ անկա-
տար կերպով թարգման կացինք ազգին իղձե-
րուն, և թէ նոյն իսկ այն կերպով վարուե-
ցանք զիտամբ, խորհրդով, որ անկատար կեր-
պով պատկուին այդ իղձեր: Այս առարկու-
թիւնն ազգայնոց ոմանց կողմէն է, և նոր ա-
պացոյց մը կը հանդիսանայ զայն Հարեան, որ
ազգին գերեզմեան վիճակը գործած է, յա-
մառ անվտանգութիւնը բնական յատկութիւն
մը ընելով ազգայնոց: Ա՛հ, եթէ այդ խիզախ վը-
ճիւռն արձակողը զիտնար թէ ասոնք որ աշխա-
տեցան վեց ամիսներէ ի վեր, աշխատեցան այն-
պէս՝ որպէս ոչ երբեք աշխատած էին իրենց
կեանքին մէջ, ընծայելով ազգին համար զամե-
նայն որ ունէին. որն իր համարութիւն, որն իր
տաղանդ, որն իր ազդեցութիւն և ամենքն իրենց
աշխատութիւն. եթէ զիտնար թէ ինչպէս ար-
համարհեցին զժողարկութիւնը ու վտանք, եթէ
զիտնար թէ լաւ եւ համարեցան զոհն իրենց
չափն ու անձը, քան թէ նշանախեց մը զոհել
ազգային ծրագիրէն. եթէ զիտնար թէ ինչ սուրբ
հայրենասիրութեամբ վտուուած էին առանց որ
և է փառքով կամ համբաւով այնպաւրկեանն ոչ
այժմ, ոչ առ յայայն, եթէ զիտնար ինչ որ ես

Պօլիս 1878 յուլիսի 21 (Մասիս)

Թրակիայի հաստատրմատարները մասնակցում էին մասնաժողովի նիստերին և առաջարկած կանդիդատներին մասին յայտնում էին իրանց կարծիքները:

Ամենից առաջ քննվեցան առաջին կանդիդատ իշխան Միլան Օբրենովիչի իրաւունքները: Սրիտասարդ քաղաքագէտներից մի քանիսը այն միտքը յայտնեցին, որ շատ լաւ կը լինէր, եթէ նոր բաղարարական իշխանութիւնը միանար հին Սերբիայի հետ, որ արդէն իրան ցոյց է տուել գործի մէջ: Բայց այդ միտքը մասնաժողովը անիրազօրեղէն համարեց, որովհետեւ նա հասկանում էր, որ ոչ Ռուսաստանը և ոչ Աւստրիան չէին թոյլ տայ Միլան Օբրենովիչի իշխանութիւնը Բալքանիայի վրայ: Մի և նոյն պատճառներով մերժվեցաւ և Չէրնոօբրիայի իշխան Նիկոլայուր: Դրանից յետոյ մասնաժողովը զբաղվեց Բուլղարիայի առաջին միւնիստր, բաղարարի Բրատիւնօի կանդիդատութեամբ: Մասնաժողովը բոլոր անդամները համաձայնեցան դրան ընտրել, որովհետեւ Բրատիւնօ համարվում է լուսաւորված, ազատամիտ, գործունայ, բաղարարիների բնաւորութեան, լեզուի և պէտքերի հետ հիմնաւորապէս ծանօթ մարդ, որ մի և նոյն ժամանակ աշխատել է Բալքանիայի ազատութեան համար: Բայց մասնաժողովը նրան չընտրեց ի նկատի առնելով, որ Ռուսաստանը համաձայն չէ տայ այդ ընտրութեանը, որովհետեւ Բրատիւնօի կեանքը կապված է բուլղարական քաղաքականութեան հետ և սկսեց չորրորդ կանդիդատ, Սերբիայի առաջին միւնիստր Բիտրիչին քննել: Թէպէտ Բիտրիչ պատրաստված է նոր կազմակերպվող տէրութեան կառավարելու համար, բայց մասնաժողովը կարծիքով այդպիսի ընտրութիւն Աւստրիայի համար հաճելի չէ լինի: Այն ժամանակ մասնաժողովը քննեց երկրորդական կանդիդատներին, որոնց առաջարկել էին եւսրոպական մի քանի լրագրիւնները, բայց դրանք էլ չընտրվեցան:

Բալքանիայի հաստատրմատարները համաձայնեցան են, որ իրանց ապագայ իշխանը շատ ծանր և դժուար գործ կունենայ: Անհանգիստ և փառասէր դրացիներով շրջապատված նոր իշխանութիւնը պէտք է երկիրը կրէ, որ այս կամ այն դրացին կարող է ցանկանալ նրան իր հետ միացնել, ուստի նա որքան կարելի է պէտք է շուտ կազմակերպվել, որպէս զի այդ ցանկութիւնների առաջն առնէ: Մասնաւոր որ բաղարարները ներկայով չեն բաւականանում և երազում են ապագայում իրանց հետ միացնել միլիտանտոր միւս բաղարարներին:

Մասնաժողովը համաձայնեցաւ որ Բալքանիայի համար այնպիսի իշխան պէտք է ընտրել որ շատ լաւ ծանօթ լինի արեւելեան գործերի հետ և որից բաղարարները տեղիք ունենան շնորհակալ լինելու նրա արած նախկին ծառայութիւններին համար: Մասնաժողովը մեջ առաջարկեցին ռուսաց նախկին դեսպան կոմս Իգնատիւնովն և հենց որ դրա անունը արտասանեցին, ամենքը ուրախութեամբ ընդունեցին, ի նկատի առնելով, որ բաղարարները նրան շատ են պարտական, որ նա ընդունակ և Արեւելքի գործերի հետ լաւ ծանօթ անձն է: Սրա այնպիսի յատկութիւններ են որոնք մասնաժողովին տեղիք են տալիս մտածելու, որ նա կոչւցանէ յոյների ինտրիգները և կը ձգտէ Բալկանիայի երկու կողմերի վրա բնակվող բաղարարներին միացնել և մի գործը իշխանութիւն հիմնել:

Բուլղարից, Տրանսիլիւ և Սօֆիայից հաղորդում են, որ բոլոր բաղարարները կամենում են կոմս Իգնատիւնովն ընտրութիւնը:

Նակից, երբ փոփոխեցին պատերազմի պատճառով արած մի քանի կարգադրութիւնները և կարելի էր յուսալ, որ այդքան զոհարարութիւններ անող երկիրը վերջապէս կը վայելէ խաղաղութեան բարիքները, որոնց բացակայութիւնը չարչարում էր սերբերին, բայց տարաբաղդարար Սերբիան ստիպված է նորից բաց անել նմանատի տաճարը: Ստորոհ Սերբիայում պատահած անցքերը երեւի կը ստիպեն Սերբիային նորից զենք առնել: Նախորից կառավարութեան ստացած լուրերը շատ ցաւալի են: Այն ինչ որ մի քանի ամիսներ ընթացքում Պրիզրենցի միութիւնը պատրաստում էր, այժմ բացարձակ կատարվում է: Սերբիայի նոր սահմանների վրա սեպտ. 2-ից սկսած մեծ բազմութեամբ կենտրոնանում են զինուորական ալեանցիներ: Հաստատ հաւատացնում են, որ Վրանիլ մօտ հաւաքվել են 30,000 զինուորական ապստամբներ, որոնք 20 թիւանօթիւն ունեն: Պարզ է, որ այդպիսի հանդամանքները թոյլ չեն տայ եւրոպական պետութիւնների գործախառնելին իրազօրեղ Քերկէի կօնգրէսի կարգադրութիւնը Սերբիայի սահմանները ուղղելու վերաբերութեամբ: Արտասահմանից ստացված բոլոր լուրերը համաձայն են, որ եւրոպական պետութիւնների հաւատարմատարները չեն համարձակվել կատարել իրանց յանձնարարութիւնները, մինչև որ նրանց գործունէութեան տեղը մեծ քանակութեամբ զօրքեր չը լինեն: Բայց եթէ ենթադրենք, որ եւրոպական մասնաժողովը զօրքեր ունենայ, որոնց աշխցութեամբ վերջացնէ իր աշխատանքները, դրանից ի՞նչ օգուտ կը լինէր: Հենց որ զինուորական ոյժը կը հեռանայ, կատարված գործը իսկոյն կը քանդվի: Այդ պատճառով ամենից առաջ հարկաւոր է վերադարձնել ալեանցիներին իրանց տեղերը, այսինքն առաջ քան թէ մասնաժողովը սկսէ իր աշխատանքները, հարկաւոր է զինուորների զօրքը: Այս գործը բաւական դժուար կը լինի: Արեւմտեանքը կամ ալեանցիները, ինչպէս նրանց անուանում են Ներօպայում, թիւրքաց կայսերութեան ամենահանգնազանք, ամենաքաջ և պատերազմական տարր են: Նոքա գերազանցում են մինչև անգամ չէրնօգորցիներին իրանց համարձակութեամբ յարձակման ժամանակ և կանգունութեամբ պատերազմի ընթացքում: Այս բոլոր յատկութիւններին պէտք է աւելացնել և նրանց ֆանատիկօտութիւնը: Արեւմտեանքը այնպէս են ոգևորված, որ մեծ եռանդով կը կռւեն: Այստեղ (Բէլգրադում) աշխատում էին գնահատել հակառակորդի ոյժը և նրան այնքան նշանաւոր համարեցին, որ սկսեցին համեմատարար զօրքեր պատրաստել: Պրիզրենցի միութիւնը 70000 մարդուց բաղկացած ոյժ ունի, որի կէսը նա կարող է Սերբիայի դէմ գործ դնել առանց իրան թուլացնելու: Սրանից այն հետեւանքի ենք հասնում, որ Սերբիայի համար անհրաժեշտ է կազմակերպել առաջին կարգի միլիցիան և 40000 մարդուց բաղկացած զինուորված ոյժ ունենալ: Այստեղ խօսում են, որ օգտակար կը լինի պատերազմական գործողութիւնները այն ժամանակ սկսել երբ աւստրիական զօրքերը կը դրանեն Նովօբազարի պաշտիւնը: Այսպիսի գործին բուն պատերազմական կէտից նայելով ընդհանուր (սերբերի և աւստրիացիների) գործողութիւնները օգտաւէտ կը լինէին, եթէ քաղաքական արգելքներ չը լինէին: Այդ հարցով կառավարութիւնը կը զբաղվէ իսկոյն միւնիստր-նախագահ Բիտրիչի ջրերից վերադառնալուց յետոյ:

Ուղարկած էին. այս շաբաթ դարձեալ զօրք ուղարկեցին: Չէլթունի հայերէն երեք պատգամաւորներ եկած են այստեղ և պատրիարքարանի միջնորդութիւնն կը խնդրեն, Ներսէս պատրիարք մեծ եպարքոսին գնաց և խնդրեց Չէլթունի հայերը թեթեւացունել և հայ գաղմագամ զինել այստեղ քանի որ Չէլթուն բոլորովին հաւաքնակ է: Եպարքոսը դեռ վճռական պատասխան չէ տուած:

Պատրիարքը դիմեց եւրոպական մեծ տէրութիւններու դեսպաններուն և խնդրեց Հայաստանին համար խոստացուած բարեկարգութիւններու գործարկութիւնը: Միանգամայն յայտնեց որ կարինի ժողովուրդը յուսահատուած, պատրաստուել է գաղթել դէպի Կովկաս, ռուսական բանակին նահանջած ժամանակ: Դեսպանները պատասխանեցին թէ պարտաւոր են հայ պատրիարքի առաջարկութիւնները ի նկատի առնել: Բերլինի դաշնագրին համեմատ. ռուսի ինչ որ է իւր խնդիրը, գրութեամբ ներկայացունէ: Պատրիարքը այդ իմաստով մի ծանուցագիր յղեց մեծ տէրութեանց դեսպաններուն որոնք անմիջապէս հաղորդեցին իւրեանց կառավարութիւններուն և Բ. Դրան ուղարկութիւնը հրաւիրած են: Պատրիարքը առաջարկած է նաև որ Բերլինի դաշնագրին ստորագրող տէրութիւնները իւրեանց կողմէն մի մասնաժողով ընտրեն և ուղարկեն Հայաստան բարեկարգութիւնները գործարկելու պաշտօնով: Պատրիարք սրբազանը խորհեան հայրիկին հետ անցած չորեքշաբթի օր գնաց Պէտրիքէթէ ռուսական դեսպանին, Ալէքսանդր Կայսեր անուանակոչութեան տօնը շնորհատրելու համար: Մեծ պատուով ընդունուած են: Այդ առիթով կրկնեցին իւրեանց խնդիրները:

Խորհման Հայրիկ ամեն կիրակի օր կը քարոզէ եկեղեցիներուն մէջ և կը յորդորէ հայաստանցի ժողովուրդին որ զենք գործածել և անհնապաշտանութիւն սովորին: Ես կը յայտնեմ ձեզ իւր խօսած քարոզներ իմաստն: Օրթագիրդ և Գումգափուի եկեղեցիներին մէջ լսեցի իւր քարոզը: «Ես թէ և վարդապետ եմ, ըսաւ, բայց գիտեմ որ այսօր իրենական քարոզ չէք սպասել ինձմէ: Պիտի ստէք որ Հայրիկ, գնացիք պարտեցար Եւրոպա, կէս քաղաքագէտ եղար. խօսէ մեզ մեր ազգի քաղաքական վիճակին վրա, կոնգրէի դրան վրա գրուած էր. իրաւունքը ուժովին է: Երբ Կարապաղիին պատգամաւորը իր զինուորական հագուստը հագած, սուրը մէջը կարած, կոնգրէի դուռէն ներս կը մտնէր, նա կուզէր ցոյց տալ թէ իւր սուրը ծայրով սրտացած իրաւունքը կը պահանջէ. բայց մենք, խեղճ հայոց ազգի պատգամաւորներ, թուղթի կտորներ մեր ձեռք առած, գնացքը գլուխին կը խնդրէինք: Քաղաքագիտութիւնը գլուխին չունի. նա ամեն բանի մէջ չափ փնտռէ (Այստեղ բացատրեց թէ ինչպէս երկու գլխատու տէրութիւններու շահերը հակառակեցան միմեկին: Գայի շահին): Իրաւունքն ալ սուրի ծայրն է: Հայաստանցիներ, այսուհետ սիրեցէք երկաթը. ձեր փրկութիւն երկաթով կը լինի. այն պատուական երկաթով որ Չէլթունի լեռներէն կելնէ. կը հասկանաք ինչ կուզեմ ասել. այդ երկաթով ամեն բան կը շինուի, խօփ, մանգաղ, սուր, հրացան և այլն: Չէլթը գործածել սկսեցէք. Բերլինի դաշնագրին 61-դ յօդուածը պարտաւորութիւն կը դնէ Բ. Դրան վրա որ ձեզ քուրդերուն և չէրկէսներուն դէմ պաշտպանէ: Բայց ամեն բան կառավարութիւնէն սպասել անօգուտ է. դուք ձեզ համար թէ չաշխատեք, վատութիւն է: Այսուհետ երբ Տրապիզոնի լեռներէն անցնելով դէպի ձեր հայրենիք երթաք, փութանակ անտառներէն մի փայտ կտրելով ձեր ձեռքն առնելու, մի հրացան ունեցէք ձեր ձեռքը: Ես ձեզ չեմ քարոզել թէ Բ. Դրան դէմ ապստամբէք բուլղարներուն նման, քաւ լիցի. բայց գոնէ սովորեցէք զձեզ զենքով պաշտպանել քուրդերու և չերկէսներու դէմ: Անիծեալ կը լինի այն որ այդպէս չի վարուի»:

Յայտնի է թէ այս ոգիով ներշնչուած քարոզները ինչ ազդեցութիւն կունենան ժողովուրդին վրա: Ամեն կիրակի օր հազարաւոր ժողովուրդ ամեն կողմերէ կը գան կը լեցունին այն եկեղեցին ուր Խորհման Հայրիկ կը քարոզէ:

Միտնեի դէմ ուղղած օրէնքի վերաբերութեամբ: Պարլամենտի անդամ Հենել յայտնեց, որ ընդհանուր իրաւունքի մէջ պէտք է օգնութիւն փնտռել սօցիալական վարդապետութեան դէմ: Առաջարկած օրէնքի նախագիծը Հենելի կարծիքով ոչ կարելի է ընդունել և ոչ ուղղել: Իշխան Բիսմարկ սկսեց հերքել պարլամենտի անդամ Բէքէլի յայտնութիւնները իւր թէ կառավարութեան և սօցիալիստների մէջ որ և է կապ է եղել: Այդ յայտնութիւնների մասին իշխան Բիսմարկ շատ մանրամասնաբար խօսեց, պարզեց նրանց և հերքեց: Նա ասաց, որ երբէք չէ բանակցել Լասալի հետ, որ նրա հետ տեսնվել է ընդամենը երեք կամ չորս անգամ և այդ տեսակցութիւնների ժամանակ նկատել է, որ Լասալը ոչ թէ հանրապետական, այլ բուն ազգային ուղղութիւն է ունեցել: Սուտ է, ասել է նա, այն յայտնութիւնը, իւր թէ Տրիքշէ սօցիալիստը իրան որ և է հաշու է ներկայացրել: Նա հրաւիրում է Տրիքշէին հաստատել այդ յայտնութիւնը: Իր ճառը վերջացնելով իշխան Բիսմարկ վճռողական կերպով խորհուրդ տուեց ընդունել նախագիծը և մատնանիլ եղաւ այն վրտանգի վրա, որ սպաւնում է սօցիալական վարդապետութիւնը: Այդ վարդապետութիւնը ձգտում է քանգել այժման պետական և հասարակական կազմակերպութիւնը:

— Լրագրիւններում կարգում ենք հետեւեալ հեռագիրը: «Սեպտեմբերի 5-ի դերմանական պարլամենտի վիճաբանութիւնների ժամանակ անդամ Բեքէլ (սօցիալիստ) պահանջեց կարգի հրաւիրել անդամ Կլէյստ-Բէտցովին, որ սօցիալիստներին մեղադրէ է պետական դաւաճանութեան մէջ և իշխան Բիսմարկին, որ սօցիալիստներին առաջակներ է անուանել, իսկ պարլամենտի անդամ Տրիքշէին ստախօս: Նախագահը հրաժարվեց լինել անձանց կարգի հրաւիրել, հաւատացնելով, որ նրանց խօսքերը անձնաւորութիւնների դէմ չեն ուղղված»:

— Վէնայի «Politische Corresp.» լրագրին Բէլգրադից հաղորդում են սեպտեմբերի 14-ին, որ այնտեղ հասել են Սերբիայի և Թուրքիայի սահմանները որոշող յանձնաժողովի անդամները, որոնք են՝ Ռուսաստանի կողմից գնդապետ բարոն Կատուրարս, Աւստրիայի կողմից մայոր Բիլլմէյ, Գերմանիայի կողմից մայոր Ալէքս, Տրանսիլիայի կողմից հրապատու Օբարէ և Իտալիայի կողմից գնդապետ օգնական Գոյա: Յանձնաժողովը սեպտեմբերի 15-ին պէտք է Նիշ ուղեորվի:

— Հալապի հեռագրական ընկերութիւնը Կ. Պոլսից սեպտեմբերի 13-ին հաղորդում է, որ Բ. Դրան լրագրոր միւնիստրներ է նշանակել Կարաչի-փաշային 8էտրիէում, Տէրիզուա-փաշային — Բուխարեստում և Կարասանջակ-փաշային — Բէլգրադում: Ֆալկօն-Բէյ թիւրքաց գործակատար է նշանակված Բալքանիայում, իսկ Պէրաէֆ-Էֆէնդի նշանակված է Բուլղարիայում:

— Բէյքոթի ընկերութեան Կ. Պոլսից հեռագրում են սեպտեմբերի 11-ին հետեւեալը: «Ալեքսանդրները Մէնզեղ-Ալի և երկու ուրիշ փաշաների սպանութիւնը որպէս յաղթութիւն տօնախմբեցին: Ապստամբ գաւառներում յաղթունքը սատականում է, և հաղորդում են որ կրկին նոր սպանութիւններ են կատարվել: Քրիստոսնայ զանաքներ սպանում են Չէրնօգորի գաղթելու Ալեքսանդր սպանում խումբերը գնում են յարձակվելու Միտրօվիցի վրա և շարունակում են պատրաստութիւններ տեսնել Եպիրոսը պաշտպանելու համար յոյների յարձակմունքներից: 15,000 ապստամբներից բաղկացած մէկ նոր բաժին պատրաստ է իսկուրայի հակառակ շարժվել:

ՄՇԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՍՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

10հոկտ. 14/26 սեպտեմբերի Լրագիրների մեծամասնութիւնը պահանջում է եւրանդոտ գործողութիւն Աֆգանիստանի դէմ, գտնելով, որ միայն զինուորական ցոյցեր բաւական չեն: «Times» լրագրին հեռագրում են Կալկաթայից. «Երբ բրիտանական զենապանութեան արգելեցին մտնել Աֆգանիստանի երկիրը, Արեւմտվելի հրամանատարը ասաց մայոր Կովանեարին, որ միայն անձնական բարեկամութեան զգացմունքը արգելում է իրան հրացանաձիգ անել մայորին:

ՍԵՐԲԻԱ

Բէլգրադից «Polit. Corresp.» լրագրի թղթակիցը գրում է:
«Դեռ երեք շաբաթ չէ անցել այն ժամանակ»

ՆԱՄՍԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլս, 4 սեպտ. 78

Չէլթունի ապստամբութիւնը կը շարունակուի: Խօզանցի Ամէդ-փաշային վրա վեց վաշտ զօրք

ԱՐՏԱԿԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բերլինից լրագրիւններն հեռագրում են, որ սեպտեմբերի 5-ին դերմանական պարլամենտը շարունակում էր վիճաբանութիւնները սօցիա-

